հաշիւը և թէ նախահաշիւը, երկուսն էլ միաձայն հաստատեց։ Նաև որոշեց նշանակել ընկերութեան գումարից 500 ռ. վարկը, որով վարչութիւնը կարողանայ Ս. Նշան եկեղեցւոյ գաւթի հին բնակարանը նորոգել երրորդ բաժանման զուգընթաց դասատան յարմարացնելու համար և այդ դասատան կարեւոր կահ կարասիքը ձեռք բերելու։

Ընկերութեան պատուաւոր նախագահ Սրբազան Առաջնորդը պահպանիչով օրհնեց ժողովրդականներին և ժամը 1ն զկնի ճաշու զոցեց նիստը։

Ատենապետը Վ. Աբեղեան Ա. Քիշմիրեան.

Խմբագրական «Արարատ» պարբերական ամսագրոյ

Ս. Էջմիածնի միաբան և Երնջակու Սուրբ Կարապետի վանուց Վանահայր Գերապատիւ Տ. Սերովբէ Սրբազան Եպիսկոպոս Արարատեանը իւր «Համառօտ Քարոյագիտութիւն» վերնագրով երկասիրութիւնից հոբէ-ը յիսուն օրինակ նուիրել է Վաղարշապատի երկսեռ դպրոցներին, և որովհետև Հոգաբարձութիւնը արդէն ստացած է այդ պատուական ընծան Սինոդի անդամ և Ս. Էջմիածնի Տպարանական ժողովոյ նախագահ Գեր Տ. Արիստակէս Սրբ. Եպիսկոպոսի միջոցաւ, ուստի Վաղարշապատի երկսեռ դպրոցների Հոգաբարձութիւնը պատիւ է համարում «Արարատ» ամսագրոյդ միջոցաւ յայտնել իւր խորին շնորհակալիքը Սրբազան Արարատեանին ի գիտութիւն հասարակաց։

Անդամ Հոգաբարձութեան Մկրտիչ Ենգիբարեանց.

Պէյ- 8. 1887 թ. Վ-ՊՐՇ-Գ-Ա։

Տփխիսու Հայոց Ներսիսեան հոգևոր դպրոցի Հոգաբարձութիւնը անցեալ Ապրիլ ամսի 16 ին գրութեամբ խնդրում է հրատարակել՝ ի գիտութիւն հասարակաց որ պ. Կոստանդին Ալիխանեանցը իւր հանգուցեալ հօր Միքայէլ Գէորգեան Ալիխանեանցի յիշատակի համար հանգուցելոյ ցանկութեան համեմատ յանձնել է նոյն դպրոցի Հոգաբարձութեան մի հազար բուբլի ի նպաստ շինութեան դպրոցին, որ տոկոսիքովը միասին անձեռնմխելի պիտի մնայ մինչև դպրոցի շինութեան սկսուիլը։

Հոգաբարձութեան շնորհակալեաց արտայայտութեան հետ միացնում մենք և մեր բարեմաղթութիւնը, աղօթելով՝ որ Ամենաշնորհ լուսաւորէ և արդարոց հետ դասէ հանգուցելոյ հոգին, յիշատակները օրհնէ և ազգիս մէջ նոյնպիսի զգացմամբ մարդիկ շատ յարուցանէ ի շինութիւն ազգի և եկեղեցւոյ։